ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8. 1952 Общественные науки

Ա. Միրզոյան

ՄԽԻԹԱՐ-ԲԵԿԻ ԿՈՂՄԻՑ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Պարսկական և օսմանյան դաժան տիրապետության ներքո դարեր շարունակ ճնշված ու հարստահարված Անդրկովկասի եղբայրական ժողովուրդները դեռևս վաղ ժամանակներից իրենց ազատության հույսը ամուր կերպով կապել են Ռուսաստանի հետ։ Սյունիքի 1722—1730 թթ. հայ ազատագրական շարժումը,— որ պարսկական և օսմանյան բռնապետությունների դեմ ուղղված Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների համատեղ պայքարի փայլուն էջերից մեկն է,— նույնպես իր հաղթանակի հույսերը կապում էր Ռուսաստանի օգնության հետ և այդպես էլ մեկնաբանվել է սովետական պատմագրության մեջ[1]։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի «Տեղեկագրում» Պ. Հարությունյանի հրապարակած «Մխիթար-Բեկի ուղերձը Ռուսական կառավարությանը» նոր փաստաթուղթն անվիճելորեն հաստատում է Սյունիքի 1722—1730 թթ. հայ ազատագրական շարժման անմիջական կապը ռուսական կառավարության հետ[2]։ Ընկ. Պ. Հարությունյանը իր հոդվածում հիշյալ փաստաթղթի արժեքը ճիշտ գնահատելով հանդերձ, անում է մի շարք սխալ եզրակացություններ՝ Սյունիքի ազատագրական շարժման էտապների, նրա գլխավոր դեպքերի ու դեմքերի վերաբերյալ։ Այդ սխալ եզրակացությունները հանգեցնում են այն բանին, որ թյուրքական զավթիչների դեմ Սյունիքում հայ ժողովրդի մղած երեք տարվա (1727—1730) հերոսական պայքարը փաստորեն ժխտվում է[3]։

---

[1] З. Т. Григорян, Вековая борьба армянского народа за свою независимость и свободу, Москва, 1946, стр. 13.

Մ. Ներսիսյան, Դավիթ-Բեկի շարժման արձագանքները Վասպուրականում և հարևան դավառներում, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», Երևան, 1941, № 5—6 (10—11)։ Վ. Պարսամյան, Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, Երևան, 1940, էջ 21—22, «Գրիբոեդովը և հայ ռուսական հարաբերությունները», Երևան, 1947, էջ 10—11։ Ա. Աբրահամյան, Նոր վավերագրեր Պետրոս Մեծի ժամանակաշրջանի հայ-ռուս բարեկամական հարաբերությունների մասին, «Էջմիածին» ամսագիր, փետրվար-մարտ, 1946, էջ 59։ Ա. Միրզոյան, Հայ ազատագրական շարժումները Սյունիքում 1722—1730 թթ., «Աշխատություններ Հայաստանի Պետական Պատմական թանգարանի», հատոր 2-րդ, Երևան, 1950, էջ 99—191 և այլն։

[2] *Պ. Հարությունյան,* Послание Мхитар-Бека русскому правительству. *Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի «Տեղեկագիր», 1952, № 3, Երևան, էջ 83—99։*

[3] *Պ. Հարությունյանն իր այդ սխալ տեսակետներն արտահայտել է նաև իր դոկտորական դիսերտացիայի ավտոռեֆերատում։ Տես* „Освободительное движение армянского народа в I четверти XVIII века", Москва, 1951, стр. 35—39.

Ինչպես հայտնի է, Սյունիքի 1722—1730 թթ. հայ ազատագրական շարժումների պատմության միակ աղբյուրը, եթե նկատի չունենանք մի շարք լրատուցիչ մանր տվյալներ, դեպքերին սկզբից մինչև վերջ մասնակից Ստեփանոս Շահումյանի թելադրած և Մխիթարյան Միաբանության անդամներից մեկի՝ Ղուկաս վ. Ստեփանյան Սեբաստացու 1737 թ. գրի առած պատմությունն է[1].

Ստեփանոս Շահումյանի պատմության մեջ Սյունիքի հայ ազատագրական շարժումներն սկսվում են 1722 թվականից և մինչև 1726 թվականը ուղղվում պարսկական բռնապետության և նրան հավատարիմ մնացած տեղական խաների ու մելիքների դեմ, իսկ 1726 թվականից մինչև 1730 թ. օսմանյան զավթիչների դեմ։ Ըստ որում, ազատագրական շարժումները 1722—1728 թվականներին գլխավորել է Դավիթ-Բեկը, իսկ նրա մահից հետո՝ 1728 թվականից մինչև 1730 թ., Մխիթար սպարապետը։ 1730 թ. Մխիթար սպարապետի ողբերգական սպանությունից հետո օսմանյան զավթիչների կողմից ճնշվում են Սյունիքի ազատագրական շարժումները։

Ընկ. Հարությունյանն իր հիշյալ հոդվածում աշխատում է պատմիչի հաղորդած այդ փաստերը քննադատորեն վերանայել։ Այդ, իհարկե, լավ է։ Անցյալի գրական ժառանգությունը պետք է քննադատաբար օգտագործել և բավականաչափ հավաստի փաստեր ունենալու դեպքում համարձակորեն վեր հանել մեր պատմագրության մեջ թույլ տրված սխալներն ու թերությունները և ճշտել դրանք։ Սակայն, մեր կարծիքով, Պ. Հարությունյանն առանց հիմնավոր փաստեր ունենալու, առանց ժամանակի դեպքերը մանրակրկիտ ու ուշադիր ուսումնասիրելու, և երբեմն էլ ելնելով պատահական թյուրիմացություններից, պատմիչի հաղորդած փաստերի մեջ աշխատում է մտցնել անհիմն ճշտումներ։

Ամենից առաջ անհրաժեշտ է քննել այն հարցը, թե պատմիչը՝ Ստեփանոս Շահումյանը, որքան հավաստի աղբյուր է։ Ստեփանոս Շահումյանի պատմության հավաստիության օգտին են խոսում երկու հանգամանք։ Նախ՝ Շահումյանը ոչ միայն դեպքերին ժամանակակից ու ականատես է եղել, այլև ակտիվ մասնակից։

Ավելորդ չենք համարում մեջ բերել Ստեփանոս Շահումյանի պատմության գրչի՝ Ղուկաս Ստեփանյանի հետևյալ խոսքերը. «Զորս ետուն գրել, որք իսկզբանէ մինչև ցվախճան յառաջադէմ լեալք էին յամենայն պատերազմունս, և ականատես իրանցն եղելոց, այսինքն Ստեփանոս Վրդանէսեան, որ ի տանէն էր Շահումեան, ի գաւառէ փոքր Սիւնեաց, և յաւանէն Երկտաստանաց, և այլ ոմանք ընդ նմա»[2]։ Ղուկաս Ստեփանյանի այդ վկայությունը ոչ մի կասկած չի թողնում, որ պատմիչն իր հաղորդած դեպքերը գիտե հանգամանորեն։ Երկրորդ՝ Ստեփանոս Շահումյանի պատմության մեզ հասած հինգ գրչագրերում էական տարբերություններ չկան և առայժմ մեր պատմագրությանը հայտնի չէ մեզ հասած ձեռագրերում կատարված որևիցէ կեղծում։

Այն հարցը, թե Ստեփանոս Շահումյանը ժամանակակից դեպքերը որքան հարազատ ու ճշմարիտ է հաղորդում, զբաղեցրել է ոչ միայն Պ. Հարությունյանին, այլև ուրիշներին։ Այդ հարցի վրա դեռևս 1919—1921 թթ. ուշա-

[1] Ստեփանոս Շահումյան, Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին, և պատերազմաց հայոցն Սեփանու, որք եղեն ընդդէմ Թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի տեառն 1722, և հայոց 1171, Վաղարշապատ, 1871։

[2] Նույն տեղում, տես տիտղոսաթերթը։

դրությունք է դարձրել պրոֆեսոր Լեոն, իսկ հետագայում անդրադարձել են սովետահայ մի շարք պատմաբաններ։

Ստեփանոս Շահումյանի մոտ կան մի շարք չափազանցություններ։ Նախ՝ պատմիչը որպես դեպքերի ակտիվ մասնակից, աշխատել է իր դերը բարձրացնել և Սյունիքի հայ ազատագրական շարժման նախաձեռնությունն իրեն վերագրել, ինչպես նկատել է Լեոն, նաև Պ. Հարությունյանն իր վերոհիշյալ հոդվածում[1]։

Մյուս կողմից՝ պատմիչը կոնկրետ պատերազմական գործողությունները նկարագրելիս, ձգտում է մեծացնել թշնամու ուժերը և ընդհակառակը փոքրացնել հայ ապստամբ մարտիկների քանակը, նպատակ ունենալով շեշտել հայ ժողովրդի մարտունակությունն ու հայրենասիրությունը։

Այդ չափազանցությունները նկատի ունենալով, ընկ. Հարությունյանը կասկածի տակ է առնում Շահումյանի հաղորդած փաստերից մի քանիսը, ենթադրելով, որ նա աղավաղում և շփոթում է նույնիսկ ապստամբության դիտավոր դեպքերի տարեթվերը, նրանց հաջորդականությունը, ապստամբության պարտության տարին, անգամ ապստամբության երկու ղեկավարների, Դավիթ Բեկի մահվան և նրան հաջորդող Մխիթար սպարապետի սպանության տարեթվերը։

Նախ հարց է առաջանում, ինչպես է պատահել, որ սկզբից մինչև վերջը դեպքերին ականատես և մասնակից պատմիչը այդ աստիճան անտեղյակություն է ցուցաբերել։ Ցուցե ընկ. Հարությունյանը կարծում է, որ պատմիչն այդ աղավաղումները կատարել է դիտավորյալ կերպով, բայց այդ դեպքում պետք է ցույց տալ և հիմնավորել— մի բան, որ չի անում Հարությունյանը և մենք կարծում ենք, անելու հիմք էլ չունի։

Պ. Հարությունյանի հիմնական փաստարկումներից մեկն այն է, որ 1726 թվականի մարտի 24-ին Ղափանի ս. Աստվածածին կոչված եկեղեցում գրված և ռուսական կառավարությանն ուղարկված ուղերձի տակ Դավիթ-Բեկի ստորագրությունը չկա, այլ այդ փաստաթղթի տակ ստորագրել են Մխիթար սպարապետը և մի շարք յուզբաշիներ, կնքելով 8 կնիքներով։ Ելնելով դրանից Պ. Հարությունյանը ենթադրում է, որ Դավիթ-Բեկն այդ ժամանակ կենդանի չէր. այլապես ինչպե՞ս կարող էր Սյունիքի հայ ազատագրական շարժման ընդհանուր ղեկավարը՝ ազատագրական շարժման ճակատագրի հետ կապված այսպիսի կարևոր փաստաթղթի տակ, չստորագրել։ Այստեղից էլ հոդվածագիրը եզրակացնում է, որ Դավիթ-Բեկը պետք է մահացած լինի 1725 թ. վերջին կամ 1726 թ. սկզբին, այսինքն մինչև հիշյալ ուղերձի գրվելը և ոչ թե 1728 թվականին, ինչպես վկայում է պատմիչը[2]։

Ընկ. Հարությունյանն անհիմն կերպով փոխելով Դավիթ-Բեկի մահվան տարեթիվը, փոխում է նաև ազատագրական շարժման երկրորդ էտապի համարյա բոլոր գլխավոր դեպքերի տարեթվերը, այդ թվում և Մխիթար սպարապետի սպանության տարեթիվը։

Ստեփանոս Շահումյանի պատմության և Մխիթար-Բեկի կողմից ռուսա-

---

1 Լեո, Հայոց պատմություն, հատոր 3-րդ, Երևան, 1946, էջ 668։ Պ. Հարությունյան, նույն տեղում, էջ 83—86։

2 Պ. Հարությունյան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հաս. գիտ. «Տեղեկագիր», 1952, № 3, էջ 87—88։

կան կառավարությանն ուղարկված հիշյալ ուղերձի ուշադիր ուսումնասիրությունը մեզ բերել է այլ եզրակացության։

Մեր կարծիքով, երբ 1726 թ. գարնան սկզբին օսմանյան մեծաթիվ զորքերը թափանցել են Սյունիքի սահմանները, հայ ազատագրական շարժման գինվորականության մի մասի մեջ առաջացել են հուսալքման տրամադրություններ և նրանք երբեմն ամբողջ զորախմբերով իրենց զորապետների գլխավորությամբ թողել ու հեռացել են Դավիթ-Բեկի բանակից. Դավիթ-Բեկից հեռացել է նաև Մխիթար սպարապետը։

Մխիթար սպարապետը, ինչպես այդ երևում է օսմանցիների դեմ նրա հետագա գործողություններից՝ չի դավաճանել հայ ազատագրական շարժումներին, այլ այդ ժամանակ դժգոհ լինելով Դավիթ-Բեկից, ցանկացել է նրանից հեռացած գինվորականությունը համախմբել իր շուրջը և ինքնուրույն կերպով շարունակել պայքարն օսմանցիների դեմ։ Ահա հենց այդ ժամանակ էլ, 1726 թվականի մարտի 24-ին, Մխիթար սպարապետի և մի շարք այլ յուզբաշիների կողմից, անկախ Դավիթ-Բեկից, ռուսական կառավարությանը գրվել է այդ ուղերձը։

Մեր այս կարծիքը հաստատվում է հետևյալ փաստերով։

Ստեփանոս Շահումյանը, անդրադառնալով ազատագրական շարժման այդ ծանր օրերին, Դավիթ-Բեկին լքողների ու նրանից հեռացողների մասին խոսում է ընդհանրապես, իսկ Դավիթ-Բեկի հետ մնացած մարդկանց հիշում է մեկ առ մեկ և այդ մարդկանց շարքում չի հիշատակում Մխիթար սպարապետի անունը։

Ստեփանոս Շահումյանն ասում է. «Յայնժամ ամենայն բնակիչք գաւառին, առ հասարակ խռովեցան, սասանեցան, թողին զքին զԴաւիթ...։ Եւ մնաց միայն Դաւիթ եօթն և տասն սպառազէն արամբ ի յանապատն Հայիձորոյ, ուր կանգնեալ էր զանառիկ բերդն։ Ընդ նմա էին նաև երեք եպիսկոպոսունք Տաթևու, երկոտասան քահանայք, զհետ գնացին նաև Տէր-Աւետիսն, և Մելիք Փարսադան սակաւ ոմամբք, զի զօրքն ամենեքեան թօթափեցան ի նոռանէ»[1]։

Պատմիչի այս վկայությունից պարզ երևում է, որ Մխիթար սպարապետն այդ ժամանակ Դավիթ-Բեկի հետ չէր. ինչպես հայտնի է, նա Սյունիքի հայ ազատագրական շարժման մեջ՝ երկրորդ մարդն էր. Դավիթ-Բեկից հետո և չէր կարող պատահել, որ մյուս զորապետների՝ Տեր-Ավետիսի և Մելիք-Փարսադանի անունները հատուկ հիշատակվեր, իսկ նրա անունը չհիշատակվեր։

Մեր այս կարծիքը հաստատվում է նաև այն փաստով, որ ռուսական կառավարությանն ուղարկված ուղերձի տակ Մխիթար սպարապետը (Մխիթար-Բեկը) չի ստորագրել որպես Ղափանի հայ ազատագրական շարժման ընդհանուր ղեկավար, այլ որպես մի զորապետ՝ ունենալով միայն երկու ենթակա յուզբաշիներ, իսկ մյուս յուզբաշիները, այդ թվում և Ավթանդիլ-Բեկը, ստորագրել են որպես ինքնուրույն յուզբաշիներ։ Ուղերձի տակ գրված է. «Գրեցաւ ի ձեր ծառայից յետնեալ ծառայ՝ Մխիթար պէկէս, և սորին մատակարար ուղպաշիքս՝ Եղեպար, և Նպիր Եղեպարէ. ևս այլ ուղպաշոցէ՝ Աւթանտիլ պէկէ, Պապասէ, Պայրնդուրէ, Զօհրապէ ողջուն և գիտութիւն լիցի արքային և իւր ազնուական իշխանացն՝ վասն Աստուածոյ սէրն զի խնդիրք

[1] Ս. Շահումյան, Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին..., էջ 43-44։

մերոյ մէջ անտես առնուք։ Եւ գրեցաւ յերկիրն Ղափանա՝ ի դուռն սուրբ Աստուածնի թվին ՌՃՀԵ. մարտի ԻԴ։ Վերջ։

Ովանէս Ուղպաշէս, Ղափանա մէլիք Պալասանէս»[1]։

Եթե Դավիթ-Բեկն այդ ժամանակ մահացած լիներ և եթե հայ պինվորականությունը Մխիթար սպարապետին ընտրած լիներ Սյունիքի հայ ազատագրական շարժման ընդհանուր ղեկավար, ինչպես կարծում է Պ. Հարությունյանը, ապա այդ դեպքում, պետք է, բոլոր յուզբաշիներն էլ ստորագրեին որպես «մատակարար» յուզբաշիներ և ոչ թե՝ «այլ» յուզբաշիներ։

Կասկածից դուրս է նաև, որ այդ «այլ» յուզբաշիները Ստեփանոս Շահումյանի հիշատակած այն յուզբաշիներից էին, որոնք նույնպես հեռացել էին Դավիթ-Բեկից և Մխիթար-Բեկի ազդեցությամբ համախմբվել ու ծրագրում էին թշնամու դեմ գործել անկախ Դավիթ-Բեկից։

Մխիթար սպարապետը Դավիթ-Բեկից առաջին անդամը չէր, որ դժգոհում էր։ Ստեփանոս Շահումյանը հաղորդում է Դավիթ-Բեկից Մխիթար սպարապետի մի այլ լուրջ դժգոհության և նույնիսկ ազատագրական շարժման նկատմամբ նրա թշնամական գործողության մասին։ «Բայց խանն Բարքուշատա,— հաղորդում է Ստեփանոս Շահումյանը,— աճապարեալ ընդ առաջ ելանէ սոցա (հայերին), ի կողմանս Խոտանանու բազում զօրօք։ Իսկ զօրականքն հայոց իբրե զայն տեսին, սաստկացուցին ի վերայ նոցա զպատերազմն մինչև յետս նահանջեցին զնոսա անտի, և սկսան յարկանել զվիրավորս ի նոցանէ։

Այլ պի Մխիթար սպարապետն խոովեալ էր ընդ տեառն իւրոյ Դաւիթ, ուստի իբրև սկսան սոքա հարկանել զթշնամիսն, և վանել, հրամայեաց Մխիթար զօրավարացն յետս դալ ի պատերազմէն, և արարին այնպէս, բայց յառաջամարտիկքն իբրև տեսին, թէ պկնի եղեալ զօրքն դարձան յետս, համարեցան, թէ ի փախուստ դարձան ի պատերազմէն, և սկսան իւրաքանչիւրքն խոյս տալ և լլանել ի պատերազմէն։ Յայնժամ զօրքն թշնամեաց իբրև զայն աղմուկ շփոթի տեսանէին, ընդդէմ դառնային սոցա, ի վերայ յարձակէին, հասանէին, և հարկանէին ի սոցանէ երեք կամ չորեք հարիւր այր, և զոմանս ի նոցանէ կենդանի կալեալ մեծաւ տանջանօք ի Բարքուշատ ածին, ընդ որս էր և Ստեփանոս Շահումեան։ Եւ զայն լսէր Դաւիթ, ի սրտմտութիւն բարկութեան բրդէր ի վերայ Մխիթարայ, և հրամայէր զկառափն հարկանել։ Բայց միջնորդ լեալ մեծամեծացն հապիւ դարձուցին զվճիռ մահուն»[2]։

Մխիթար սպարապետի և Դավիթ-Բեկի այդ տարաձայնությունները իրենց արտահայտությունն են գտել Սյունիքի հայ ազատագրական շարժումների վերաբերյալ ժողովրդական ավանդություններում։ Այդ մասին ազգագրագետ Ե. Լալայանի գրի առած ժողովրդական զրույց-ավանդություններում ասված է հետևյալը. «...Թշնամիներին ընդդիմադրելու համար Ստեփանոս իշխանը խորհուրդ է տալիս մելիք-Փարսադանին, որ յետ կանչէ Վրաստանից Դաւիթ-Բէկին։ Սակայն Մխիթար սպարապետը ընդդիմանում է ասելով «լազգիները գալիս են թող գան, ով տղամարդ է՝ թող անուն հանէ։ Կարիք չկայ Դաւիթ-Բէկին կանչելու»։ Մելիք-Փարսադանը ենթարկւում է Մխիթար սպարապետի ազդեցության և չի համաձայնում կանչելու։ Ստեփանոս իշխանը տես-

---

1 Պ. Հարությունյան, նույն տեղում, էջ 99։

2 Ս. Շահումյան, Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին..., էջ 39—41։

նում է, որ Մխիթար սպարապետը հետամուտ է միայն իւր բաղկի զօրութիւնը ցոյց տալու և նրա պէտք չէ, որ երկիրն աւերւում է[1]։

Մեզ թվում է, որ այդ փաստերը հիմնավոր կերպով հաստատում են, որ Մխիթար սպարապետն ազատագրական շարժումների ընթացքում իրոք դժգոհել է Դավիթ-Բեկից և աշխատել է թշնամու դեմ գործել նրանից անկախ։ Ինչպես տեսանք Շահումյանից կատարված մեջբերումից, այդ դժգոհությունները՝ մինչև ազատագրական շարժման 1726 թ. գարնան ծանր օրերը, արտահայտվել են այն աստիճան սուր կերպով, որ Դավիթ-Բեկը նույնիսկ հրամայել է, մահապատժի ենթարկել իր սպարապետին։ Այսքանից հետո մի՞թե պարզ չէ, որ Մխիթար սպարապետը Դավիթ-Բեկի այդ ծանր օրերին կարող էր վրեժխնդրությամբ երես թեքել նրանից։

Որ Ռուսական կառավարությանն ուղարկված ուղերձը Մխիթար սպարապետի և մյուս յուզբաշիների կողմից գրվել է Դավիթ-Բեկից և նրան հավատարիմ մնացած մարդկանցից անկախ, գուցե և գաղտնի, այդ երևում է նաև նրանից, որ Ստեփանոս Շահումյանն այդ մասին ոչ մի հիշատակություն չի անում։ Դեպքերին ակտիվ մասնակից Շահումյանը չէր կարող չիմանալ այդ կարևոր փաստաթղթի մասին, եթե այն իրոք գրված լիներ ազատագրական շարժման ընդհանուր ղեկավարի կողմից։ Իսկ որ Դավիթ-Բեկը 1726 թ. գարնանը, ուղերձի գրվելու ժամանակ կենդանի էր, այդ հաստատվում է նախ՝ պատմիչի ուղղակի ցուցումից, թե Դավիթ-Բեկը մահացել է 1728 թվականին. «Ի եղև ի ժամանակին յայնմիկ,— ասում է Ստեփանոս Շահումյանը,— հիւանդանալ Դաւիթ և մեռանիլ իսկ խաղաղութեամբ ի տան իւրում ի Հալիձոր, յամի տեառն 1728, և թուականութեանն հայոց 1177, կացեալ ամս վեց յիշխանութեան իւրում ի Խափան»[2]։ Պատմիչի այս ցուցումի մեջ Դավիթ-Բեկի մահվան տարեթիվը կրկնվում է երեք ձևով։ Մեր կարծիքով այդ բավական զորեղ փաստ է և այն ժխտելու համար պետք է ունենալ հիմնավոր փաստեր։

Բացի այդ ակնհայտ է 1726—1728 թվականներին Դավիթ-Բեկի գործունեությունը Սյունիքի ազատագրական շարժման մեջ։ Պ. Հարությունյանը հայտարարում է, որ Ստեփանոս Շահումյանը 1726—1728 թվականների ընթացքում կատարված դեպքերից և ոչ մեկը կոնկրետ կերպով չի կապում Դավիթ-Բեկի հետ, այլ նրա մասին ընդհանուր խոսքեր է ասում, որովհետև Դավիթ-Բեկն այդ տարիներին կենդանի չէր[3]։

Այդ հայտարարությունը նույնպես անհիմն է։ Բերենք մի քանի կոնկրետ օրինակներ։ 1726 թ. գարնանը օսմանցիները Ղափանում առաջ են շարժվում. Դավիթ-Բեկի զորախմբերի մի մասը նրան լքում և հեռանում է, իսկ Դավիթ-Բեկը անհողդողդ շարունակում է մարտը։ Ստեփանոս Շահումյանը հետևյալն է գրում այդ մասին.

«Բայց Դաւիթ յայսմ ամենայնի ոչ լքաւ, ոչ կասեցաւ ի խորհրդոցն, ոչ զանկիտեաց ի բազմութենէ բարբարոսացն, և ոչ դադարեցաւ ի քաջագործութենանցն, և ոչ յուսահատեցաւ յԱստուածային խնամոցն։ Այլ արիաբար զբերդն ամրացուցանէր, զհամբար բերդին պատրաստէր, զզօրականսն առ ինքն ժողո-

---

[1] «Ազգագրական Հանդէս», գիրք 12-րդ, Թիֆլիս, 1905, էջ 180։
[2] Ս. Շահումյան, Ընտիր պատմութիւն Դաւիդ Բէգին..., էջ 67—68։
[3] Պ. Հարությունյան, նույն տեղում, էջ 93։

վէր, բաղմացուցանէր. և զԱստուածն ամենակարող յոգնութիւն ինքեան կոչէր»[1]։

Իսկ Դավիթ-Բեկի 1727 թ. գործունեության մասին պատմիչն ավելացնում է. «Արդ՝ յամի տեառն 1727, որ այն հինգերորդ ամ էր գալստեանն Դաւթի ի Խափան, իբրև տեսանէր Դաւիթ Բէգն ի վերին խնամոցն զթշնամիսն իւր յամենայն ուրեք յառաջի իւր վանեալս և խորտակեալս առաքեաց Շահ-Թահմազ արքային պարսից զչորս բեռինս գլխովք սպանելոց, ի բաղմութենէ կոտորածին., զորս ի յօսմանցւոցն կոտորեցին»[2]։ Շահ-Թահմազը, իմանալով, որ Դավիթ-Բեկը տվյալ դեպքում հայերի և պարսիկների ընդհանուր թշնամի օսմանցիներին այսպես հաջող կոտորում և Սյունիքի սահմաններից դուրս է քշում, գրում է նրան հետևյալ հրովարտակը. «Շահ-Թահմազ արքայ Պարսից առ քաջդ Դաւիթ բէգ, և առ բաջ զորավարսդ հայոց, որք ընդ քեզ են՝ ողջոյն. ի բազմաց բաղում անգամ ազդ եղև մեզ քաջութեանց քոց. բայց արդ՝ իբր ականատես իսկ եղեալ մեր զձերոց մեծամեծ քաջութեանց, որ ընդ դէմ թշնամեաց մերոց։ Ահա արդ կացուցի զքեզ այսօր իշխանն, և գլուխ ամենայն իշխանաց մերոց, որք են ի կողմանսդ յայդոսիկ. և երկիրդ Խափանու՝ զոր կալար քաջութեամբ, քեզ լիցի։ Բայց դու ելցես, և ժողովես առ քեզ զամենայն զօրս, և զխանս ի կողմանցդ այդոցիկ, և ի բաց հանցես զօսմանցին ի սահմանաց քոց»[3]։ Այնուհետև պատմիչը շարունակում է, որ Շահ-Թահմազից այս հրովարտակն ստանալուց հետո նույն թ., այսինքն 1727 թ. «...ել գնաց Դաւիթ ի Հալիձորոյ ի Մեղրի, և բնակեցաւ անդ. և ժողովեալ առ ինքն զամենայն զօրսն ի Մեղրւոյ, և ի Զանգրոյ, խաղաց գնաց անտի, և բնակեցաւ ի Կարճիվան աւանն. և հանդէս արարեալ անդ ամենայն զօրացն՝ առաքէ զնոսա ի ձեռն քաջ զօրավարացն ի վերայ Օրդուվար քաղաքի»[4]։

Այնուհետև Ստեփանոս Շահումյանը պատմում է Դավիթ-Բեկի գլխավորությամբ՝ հայ ազատագրական զորքերի կատարած մարտական գործողությունները օսմանցիների դեմ՝ Օրդուբադում և Ագուլիսում, պատմում է Ագուլիսում Մելիք-Փարսադանի սպանությունը դավաճան Մելիք-Մուսիի կողմից և այլն։

Ինչպես տեսնում ենք, 1726—1728 թթ. օսմանցիների դեմ մղված բոլոր մարտերը տեղի են ունեցել Դավիթ-Բեկի գլխավորությամբ ու անմիջական մասնակցությամբ։ Պ. Հարությունյանը նեղ տեղից դուրս գալու համար՝ փորձում է 1726—1728 թթ. կատարված վերոհիշյալ դեպքերի մի մասի տարեթվերը ետ տանել, մնացած դեպքերն էլ կապել Մխիթար սպարապետի անվան հետ, առանց կարողանալու որևէ կերպ հիմնավորել։

Սյունիքի սահմանների վրա առաջին անգամ օսմանցիների հարձակման մասին Ստեփանոս Շահումյանը հաղորդում է. «Արդ՝ ոոքա (օսմանցիները) իբրև այսպէս զօրացն ի կողմանս յայնոսիկ, և զմայրաքաղաքն Երևանայ յետ բաղում ժամանակաց պաշարմանն առին, և զամենայն բնակիչսն ի սուր սուսերի մաշեցին։ Ապա յամի տեառն 1726 և ի թուականութեան հայոց 1175, անթիւ անհամար զօրօք ի Սիւնեաց աշխարհն մխեացն, և կալան յամենայն կողմանց զերկիրն Դաւթի, զնօթնարերդ գաւառն Խափանու»[5]։

---

[1] Ս. Շահումյան, Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին..., էջ 44։
[2] Նույն տեղում, էջ 58։
[3] Նույն տեղում, էջ 58—59։
[4] Նույն տեղում, էջ 59—60։
[5] Նույն տեղում, էջ 43։

Պ. Հարությունյանը մերժելով պատմիչի հաղորդած այդ վկայությունը, պնդում է, որ Սյունիքի սահմանների վրա օսմանցիներն առաջին անգամ հարձակվել են ոչ թե 1726 թ., այլ 1725 թվականին։ Իր այդ կարծիքը հաստատելու համար նա վկայակոչում է երկու փաստաթուղթ։ Մեկը Ղարաբաղում (Սղնախներում) գտնված Պյոտր I-ինի պատվիրակ «էլչի» Իվան Կարապետի 1725 թ. մայիսի 11-ին, Պյոտր Անդրեևիչ Տոլստովին գրած նամակը, իսկ մյուսը՝ 1726 թ. մարտի 24-ին Մխիթար-Բեկի և մյուս յուզբաշիների կողմից ռուսական կառավարությանն ուղղված ուղերձը։

Հարությունյանի վկայակոչած այս երկու փաստերից առաջինը՝ Իվան Կարապետի նամակը, ինչպես հայտնի է օսմանցիներին չի վերաբերում. այդտեղ հիշատակված է Դավիթ-Բեկի պայքարը տեղական խաների ու բեգերի դեմ։ Իսկ երկրորդից՝ Մխիթար-Բեկի ուղերձից ամենևին էլ չի երևում, որ օսմանցիները Սյունիքի վրա առաջին անգամ հարձակվել են 1725 թ.։ Օրինակ ուղերձում այդ մասին ասված է. «...Այլ ինչ երկարեմք. և յետ սոցա դիմեցան առ մեզ։ Եւ մենք Աստուծոյ զօրութեանն ապաւինեցաք, և յուսացաք աթոռս թագաւորութեանդ քոյ, և ակնունելով ձերում իշխանութիւնն և Աստծոյ յոգնութիւն սպառազինեալ պատերազմեցաք յետ օսմանցոց. Աստուծով յաղթեցաք նոքա և պաղում գերիք ևս ապատեցաք։ Եւ այժմս օս(մ)անցիք բազմացեալ եկեալ էն Դ կողմանէ (մ)եզ պատեալ, դեղօրան(ք)ն առեալ ընդ մեզ պատերազմում, զի ոչ եմք կարում աստր և անդրն շրջիլ՝ այլ մնացեալ եմք ի մէջ ղալին, որպէս հաւքն ի մէջ ղափանլի»[1]։

Ինչպես տեսնում ենք ուղերձի այս տողերից, Սյունիքի վրա օսմանցիների առաջին հարձակման տարեթիվը մնում է տակավին անհայտ։ Օսմանցիները 1726 թ. մարտի 24-ից առաջ Սյունիքի սահմաններն են մտել, բայց ե՞րբ, 1725 թ. վերջերի՞ն, թե 1726 թվականի սկզբներին։ Մեր կարծիքով ուղերձի այս տվյալները ոչ միայն չեն հակասում պատմիչի այն վկայությանը, որ օսմանցիներն առաջին անգամ Սյունիքի սահմանները մտել են 1726 թ., այլ նույնիսկ հաստատում և լրացնում են այն։ Եվ իրոք, օսմանցիները Սյունիքի սահմաններն են մտել 1726 թվականի փետրվարի վերջերին, կամ մարտի սկզբներին, ըստ ուղերձի տվյալների, սկզբից զգալի անհաջողություններ են ունեցել, բայց հետո մինչև 1726 թ. մարտի 24-ը, այսինքն մինչև ուղերձի գրվելը, թափանցել են Ղափան, գրավել են նրա մեծագույն մասը և Սյունիքի հայ ապատագրական շարժման համար ստեղծել են այն ծանր վիճակը, որի մասին վերևում ասացինք։

Այնուհետև Պ. Հարությունյանի կարծիքով, ուղերձի այս տողերի համաձայն՝ 1726 թ. գարնան սկզբին, երբ օսմանցիները թափանցել են Ղափան, շրջապատել են նաև Հալիձորի բերդը։ Այդ ևս ճիշտ չէ։ Ուղերձում խոսքը կոնկրետ Հալիձորի բերդի շրջապատման մասին չէ. այդտեղ նկարագրված է ընդհանրապես Ղափանում ստեղծված ծանր դրությունը։ 1726 թ. գարնանը Ղափանում ստեղծված ծանր վիճակի մասին համարյա նույն խոսքերով պատմում է նաև Ստեփանոս Շահումյանը։ Նա ասում է. «Յամի տեառն 1726 և ի թուականութեան Հայոց 1175, անթիւ անհամար զօրօք (օսմանցիները) ի Սիւնեաց աշխարհն մխեցան, և կալան յամենայն կողմանց զերկիրն Դաւթի, զնօթնարերդ զաւառսն Խափանու»[2]։

[1] Պ. Հարությունյան, նույն տեղում, էջ 98—99։
[2] Ս. Շահումյան, Էնսիր պատմութիւն Դաւիթ Բէկին..., էջ 43։

Ստեփանոս Շահումյանը դրանից անմիջապես հետո ուղղակի ասում է, որ այդ ժամանակ Հալիձորը շրջապատված չէր և Հալիձորի շրջակայքում Դավիթ-Բեկը համառ աշխատանք էր ծավալել իրեն լքած զորքերին նորից համախմբելու և օսմանցիներին Սյունիքից դուրս քշելու համար։ Այնուհետև՝ պատմիչի պարզ ու որոշ հաղորդած թվական տվյալները ցույց են տալիս, որ օսմանցիները շրջապատել են Հալիձորը 1727 թ. փետրվարի վերջերին կամ մարտի սկզբներին։ «Արդ յամսեանն իններորդի յետ գալստեան օսմանցւոց ի Խափան,— ասում է Ստեփանոս Շահումյանը,— որ այն հինգերորդ ամ էր գալստեան Դաւթի, եկին հասին ի Խափան ի Սուլթան Ահմէտէն օսմանցւոց, Պէքիր փաշան, և Արապ Ալի փաշայն, բազում զօրօք...»[1]։ Ուրեմն, օսմանցիները՝ Ղափան գալուց, 1726 թ. մարտից, 9 ամիս հետո, այսինքն 1727 թ. հունվարին, որ Դավիթ-Բեկի Ղափան գալու 5-րդ տարին էր, օգնական զորք են ստացել, Պեքիր և Արապ փաշաների գլխավորությամբ, որից հետո ամբողջ ձմեռը նախապատրաստվել են, իրենց շուրջն են համախմբել տեղի խաների ու մելիքների մի ստվար մասը,— որոնք այդ ժամանակ ծախվել էին օսմանցիներին և Սյունիքի հայ ազատագրական շարժման նկատմամբ թշնամական դիրք էին բռնել— և 1727 թ. գարնանը սկսել են հարձակումը Հալիձորի վրա։ «Եւ (օսմանցիները) հանդէս արարեալ ամենայն զօրացն,— ասում է Ստեփանոս Շահումյանը,— կարգեցան, պատրաստեցան, դիմեցին գալ ի վերայ Դաւիթ Բէգին. և եկին բնակեցան յայնկոյս գետոյն հանդէպ Հալիձորոյ, երեքտասներորդում աւուր քառասունորդաց պահոց»[2], ուրեմն՝ 1727 թ. մեծ պասի 13-րդ օրում, այսինքն փետրվարի վերջին կամ մարտի սկզբներին։ Ահա այդ ժամանակ էլ Հալիձորի բերդում շրջապատված հայ զորքերի հանդուգն հարձակումով Հալիձորի տակ ջախջախվում են օսմանցիները և աստիճանաբար դուրս քշվում Սյունիքից։

Այդ դեպքերից հետո, ինչպես վերևում արդեն հիշատակել ենք, պատմիչի մոտ հաջորդականությամբ հիշատակվում են՝ Դավիթ-Բեկի և Շահ-Թահմազի բաղաքական հարաբերությունները, Օրդուբադի և Ագուլիսի պատերազմական գործողությունները հայերի և օսմանցիների միջև նույնպես 1727 թ.։ Ուրեմն, ըստ պատմիչի Ագուլիսի դեպքերը և ագուլիսցի մելիք-Մուսիի կողմից, դավաճանությամբ Դավիթ-Բեկի զորապետներից մեկի՝ մելիք-Փարսադանի սպանությունը տեղի է ունեցել 1727 թ.։ Պ. Հարությունյանը չհամաձայնելով պատմիչի հետ, պնդում է, որ Ագուլիսի դեպքերը տեղի են ունեցել ոչ թե 1727 թ., այլ 1724 թ. և այդ ժամանակ էլ սպանվել է մելիք-Փարսադանը։

Հարությունյանն իր այդ կարծիքը հիմնավորելու համար բերում է հետևյալ երեք փաստարկները. ա) Ագուլիսում մելիք-Փարսադանի գերեզմանաքարի վրա գրված է, որ նա մահացել է 1724 թ.։ բ) 1726 թ. մարտի 24-ին ռուսական կառավարությանն ուղղված ուղերձի տակ մելիք-Փարսադանը չի ստորագրել, այլ նրա փոխարեն ստորագրել է նրա որդի մելիք-Պալասանը (Պալին)։ գ) Ագուլիսցիները Դավիթ-Բեկի դեմ ապստամբել են 1724 թ., որովհետև այդ ժամանակ դիոնս Ագուլիսն օսմանցիների կողմից գրավված չէր և

---

[1] Մ. Շահումյան, Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէկին.... էջ 44—45։
[2] Նույն տեղում, էջ 45—46։
[3] Նույն տեղում. էջ 61—66։

ագուլիսցիները շարունակում էին հենվել պարսիկների վրա՝ ընդդեմ Դավիթ-Բեկի[1]։

Մեր կարծիքով ընկ. Հարությունյանի այդ երեք փաստարկումներն էլ անհիմն են։ Նախ՝ Ագուլիսի վերոհիշյալ դեպքերի ժամանակ Ագուլիսն արդեն ենթարկված էր օսմանցիներին։ Այդ հաստատվում է մի կողմից Ստեփանոս Շահումյանի ուղղակի ցուցումներով, իսկ մյուս կողմից Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի № 2121 ձեռագրում Հովակիմ Դպիրի 1725 թ. գրած հիշատակարանից։ Հովակիմ դպիրի վկայությամբ, Գողթանի «խաս» կոչված գյուղերը, այդ թվում և Ագուլիսը, կամավոր կերպով հանձնվել են օսմանցիներին[2]։ Հետաքրքրական է, որ Հովակիմ Դպիրի այդ ցուցումը համընկնում է Ստեփանոս Շահումյանի հետևյալ վկայությանը.

«...Զի իշխանքն Ագուլեցւոց ծածկապէս դաշնադիրք էին ընդ օսմանցւոց...»։ Եվ այդ պատճառով էլ, ասում է Ստեփանոս Շահումյանը, Ագուլիսում «Մելիք Մուսին (որ նա ինքն էր քաղաքապետն) իբրև դայր յանդիման լինէր՝ Դաւիթ իւրոցն հրաման տայր, և ասէր ի ալիշերիս յայսմիկ հատէք զգլուխն Մոսեայ, զի այր նենգաւոր է նա և խարդախ, բայց Մելիք Փարսադան յառաջ մատուցեալ բարեխօս լինէր վասն նորա, և զվճիռ մահու դարձուցանէր»[3]։ Այնուհետև պատմիչը որոշակի ասում է, որ Դավիթ-Բեկի զորքերը երբ մտան Ագուլիս, գնացին Ագուլիսի շուկան՝ օսմանցիների մասին տեղեկություններ հավաքելու և իմացան, որ օսմանցիների հարկահաններն իրենց գալուց առաջ Ագուլիսից փախել են[4]։ Որից հետո պատմիչը մանրամասն հաղորդում է Ագուլիսի տակ Դավիթ-Բեկի զորքերի և օսմանցիների երեք ընդհարումների, հատկապես Մարադա դաշտի ճակատամարտի և օսմանցիների պարտության մասին։ «Եւ մնացեալ սոցա (Դավիթ-Բեկի զորքերը) անդ (Ագուլիսում) ի միջոցի տասն աւուրց,— ասում է Ստեփանոս Շահումյանը,— երիցս անգամ յարձակեցան զօրքն օսմանցւոց ի վերայ նոցա, և երիցս խորտակեցան ի քաջամարտիկ զօրացն Դաւթի»[5]։ Այս որոշակի փաստերից հետո մի՞թե պարզ չէ, որ Ագուլիսի դեպքերը չէին կարող 1724 թ. լինել, քանի որ 1724 թ., ինչպես հաստատում է նաև ինքը Պ. Հարությունյանը, օսմանցիները Նախիջևանի և Ագուլիսի սահմանները դեռ չէին մտել. էլ ինչպե՞ս կարող էր պատահել, որ ագուլիսցի մելիք-Մուսիի կողմից դավադրությամբ մելիք-Փարսադանը սպանվեր 1724 թ., քանի որ այդ սպանությունը կատարվել է Ագուլիսի վերոհիշյալ դեպքերի ժամանակ։ Ուրեմն, տվյալ դեպքում պետք էր փնտրել մելիք-Փարսադանի գերեզմանաքարի վրա 1724 թ. գրելու թյուրիմացության պատճառները, մանավանդ որ պատմիչի մոտ հիշատակվում է օսմանցիների կողմից Հալիձորի առաջին շրջապատման նախօրեին՝ 1727 թ. գարնանը, Դավիթ-Բեկի հետ մելիք-Փարսադանի կատարած գործողությունը[6]։

Մելիք-Փարսադանի տապանագրի վերաբերյալ տեղեկությունը Պ. Հարությունյանը վերցրել է ազգագրագետ Ե. Լալայանի կողմից Զանգեզուրի գավառում գրի առնված Ղափանի մելիքությունների մասին զրույց-

1 Պ. Հարությունյան, նույն տեղում, էջ 89—90։
2 Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, № 2121 ձեռագիր, էջ 368 ա։
3 Ս. Շահումյան, Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին..., էջ 62—63։
4 Նույն տեղում, էջ 61։
5 Նույն տեղում, էջ 62—63։
6 Նույն տեղում, էջ 44։

սվանդություններից[1]։ Եվ Լալայանն իր գրի առած այս ավանդությունների «Երկու խոսք» ներածականում չի ասում, որ մելիք-Փարսադանի տապանագիրն անձամբ է ընթերցել. ընդհակառակը, նա հայտնում է, որ Ագուլիսի հիշյալ դեպքերի մասին ժողովրդի մեջ մնացած հիշողություններն իրեն պատմել է Վերին Ագուլիսի քահանա, 80-ամյա ծերունի Տեր-Մովսես Մելիք-Ստեփանյանը։ Մեր կարծիքով, Մելիք-Փարսադանի տապանագիրը պարզապես սխալ է ընթերցվել։ Ըստ Ե. Լալայանի, մելիք-Փարսադանի գերեզմանաքարի վրա գրված է. «Այս է տապան Հալիձորեցի Մելիք-Փարսադանին որ է որդի Պալասանի։ Թվին ՌՃՀԳ»[2]։ Բայց ըստ պատմիչի տվյալների պետք է լինի՝ թվին ՌՃՀԶ։ Ուրեմն պարզ է, որ տապանագրի մաշվածության կամ մամռապատվածության պատճառով վերջին Զ-ն ընթերցվել է Ը և 1727 թվականի փոխարեն ստացվել է 1724 թ.։

Ինչ վերաբերում է Պ. Հարությունյանի այն փաստարկմանը, որ Մելիք-Փարսադանը 1726 թվականի մարտի 24-ին ռուսական կառավարությանը գրված ուղերձի տակ չի ստորագրել, միանգամայն հասկանալի է. մելիք-Փարսադանն այդ ուղերձի տակ չէր էլ կարող ստորագրել, որովհետև 1726 թ. գարնանը նա Դավիթ-Բեկից անջատվածների շարքում չէր, որոնք գրել են այդ ուղերձը, այլ ինչպես վկայում է պատմիչը, Դավիթ-Բեկի հետ էր[3]։

Այժմ մի քանի խոսք 1726 թ. գարնանը Դավիթ-Բեկից կարճ ժամանակով բաժանվելուց և կրկին Դավիթ-Բեկին միանալուց հետո. Մխիթար սպարապետի հետագա գործունեության և նրա սպանության տարեթվի մասին։

Ինչպես հայտնի է, 1726 թ. գարնանը, երբ օսմանական զորքերը մտան Սյունիք, սկզբում Դավիթ-Բեկի զորքերի մեջ առաջացավ հուսալքում. այդ ժամանակից մինչև 1727 թ. գարունը, այսինքն մինչև օսմանցիների կողմից Հալիձորի շրջապատումը, Մխիթար սպարապետի անունը պատմիչի մոտ չի հիշատակվում, բայց Հալիձորի շրջապատման ժամանակ նորից Մխիթար սպարապետը հանդես է գալիս և մյուս զորապետների հետ միասին մեծ քաջությամբ մասնակցում է Հալիձորի տակ օսմանցիների ջախջախմանը։ Պատմիչի այս ցուցումից և այն վկայությունից, որ Դավիթ-Բեկի զորքերի մեջ լրում առաջանալուց հետո, Դավիթ-Բեկը չհուսահատվեց, այլ սկսեց համառությամբ ու արիաբար Հալիձորի բերդն ամրացնել, պարեն կուտակել և լքված ու իրենից հեռացած զորքերին նորից իր շուրջը համախմբել, միանգամայն հասկանալի է դառնում, որ Դավիթ-Բեկի ջանքերով Մխիթար սպարապետը մինչև 1727 թ. գարունը կրկին վերադարձել է Դավիթ-Բեկին հավատարիմ մնացած զորքերի շարքը և մեծագույն եռանդով շարունակել է իր պայքարը օսմանական զավթիչների դեմ։ Օսմանցիների դեմ Մխիթար սպարապետի հետագա հերոսական պայքարը և հայ ազատագրական շարժմանը մինչև վերջ հավատարիմ մնալը ցույց է տալիս, որ Մխիթար սպարապետի այդ քայլը՝ 1726 թ. գարնանը Դավիթ-Բեկից ժամանակավոր բաժանվելը, մի չկրկնվող սխալ էր նրա հետագա գործունեության մեջ։

Ստեփանոս Շահումյանի տվյալներից հայտնի է, որ 1728 թ. Դավիթ-Բեկի մահից հետո Սյունիքի հայ ազատագրական շարժման ղեկավար է ընտրվում Մխիթար սպարապետը և նա երկու տարի (1728—1730) գլխավորելով Սյունիքի

1 «Ազգագրական հանդես», գիրք 12-րդ, Թիֆլիս, 1905, էջ 175—202։
2 Նույն տեղում, էջ 188։
3 Ս. Շահումյան, Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէկի..., էջ 44։

ազատագրական շարժումներն օսմանցիների դեմ, 1730 թ. Խնձորեսկ գյուղում դավադրությամբ սպանվում է։

Պ. Հարությունյանը պնդելով իր այն սխալ կարծիքը, թե Դավիթ-Բեկը մահացել է ոչ թե 1728 թվականին, այլ 1725 թ. վերջին կամ 1726 թ. սկզբին, գրում է, որ Մխիթար սպարապետը Սյունիքի հայ ազատագրական շարժումները գլխավորել է ոչ թե 1728—1730, այլ 1726—1727 թթ. և նրա սպանությունն էլ կատարվել է 1727 թ.։

Պ. Հարությունյանի միակ փաստարկումն այն է, որ իբր Մխիթար սպարապետի տապանագրում հիշատակված է, որ նա սպանվել է 1727 թ.։ Հարությունյանն այդ պնդելու համար վկայակոչում է 1898 թ. «Ազգագրական հանդէսում» հրատարակված Մխիթար սպարապետի տապանագիրը, որի վերջին տողերում իրոք գրված է. «Նահատակուեցաւ ՌՃՀԶ» (1727 թ.)[3]։ Բայց Հարությունյանին ինչպես երևում է, հայտնի չէ, որ Մխիթար սպարապետի տապանագրի այս հրատարակության մեջ սխալ է թույլ տրված և հետագայում հենց ինքը, Ե. Լալայանը լռելյայն ուղղել է իր այդ սխալը։ 1905 թ. Ե. Լալայանն «Ազգագրական հանդէսում» վերահրատարակել է Մխիթար սպարապետի տապանագիրը և այդտեղ հիշատակված է, որ Մխիթար սպարապետը սպանվել է 1730 թ.։ Մեջ ենք բերում Մխիթար սպարապետի տապանագրի 1905 թ. վերահրատարակված տեքստն ամբողջությամբ։

«Այս է տապան ի հանգստեան,
Իջեալ մարմնով ի գերեզման,
Սայ Մխիթար մեծ անուանեալ,
Որա օնէր իշխանութիւն,
Սա բեմուրատ պնաց ջիվան.
Որ է երկրէն սայ կեանճուվ էր
Նահատակուեցաւ ՌՃՀԹ»։ (1730 թ.)[4]։

Այժմ պարզ է, որ Մխիթար սպարապետի սպանության ժամանակի վերաբերյալ տապանագրի տարեթիվը համընկնում է պատմիչի հաղորդած տարեթվի հետ։ Եվ դրանով ճշտվում է ոչ միայն Մխիթար սպարապետի սպանության (1730 թ.), այլև Դավիթ-Բեկի մահվան (1728 թ.) տարեթիվը, քանի որ Մխիթար սպարապետը սպանվել է, ինչպես այդ հայտնի է պատմիչի տվյալներից, իր իշխանության երկրորդ տարում։ Հետևաբար Սյունիքի հայ ազատագրական շարժումներն օսմանցիների կողմից ճնշվել են ոչ թե 1727 թ., ինչպես սխալմամբ պնդում է Պ. Հարությունյանը, այլ 1730 թ.։ Մանավանդ, որ պատմիչը հաստատում է (որին չի առարկում նաև Պ. Հարությունյանը), թե հենց Մխիթար-Բեկի սպանության ժամանակ էլ ճնշվել են Սյունիքի հայ ազատագրական շարժումները։

Այսպիսով, ազատասեր հայ ժողովուրդը Սյունիքում իր ազատության ու անկախության համար պարսկական և օսմանյան գավթիչների դեմ արյունահեղ մարտեր է մղել ոչ թե հինգ տարի (1722—1727), այլ ութ տարի (1722—1730)։ Այդ են հաստատում անհերքելի փաստերը և այդպես էլ մինչև այժմ ընդունված է մեր պատմագրության մեջ։

[1] Ա. Շահումյան. Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէկի..., էջ 68—71։
[2] Պ. Հարությունյան, նույն տեղում, էջ 89։
[3] «Ազգագրական հանդէս», գիրք Դ. Թիֆլիս, 1898, էջ 35։
[4] «Ազգագրական հանդէս», 12-րդ գիրք, Թիֆլիս, 1905, էջ 197։